կեանքի միւս նախադրեալները կազմում։

Այս ամէնի դիմաց, ճիշդ է, յանցանքներ եւս կան արձանագրուած բոլշեւիկների հաշուին, ինչպէս օրինակ Ուկրայինայի, Ադրբէջանի, Հայաստանի եւ Վրաստանի ազգային անկախութիւնների ոչնչացնելը։ Սակայն, այստեղ էլ պէտք է ասել, որ նրանք իրենց յանցագործութիւնը չարան մինչեւ այդ պետութիւնները աշխարհագրական քարտէսից իսպառ ջնջելը. ո՛չ, ընդհանուր Միութեան սահմաններում էլ սրանք մնացին իբրեւ առանձին-առանձին հանրապետութիւններ՝ ինքնավարութեան որոշ իրաւունքներով եւ բաւական լայն ազատութիւններով ազգային-մշակոյթային գործերում։

Բոլշեւիկեան այս ընդհանուր տրամադրութիւնները իրենց անդրադարձումն ունեցան եւ անդրկովկասեան հանրապետութիւնների մէջ ապրող ազգային փոքրամասնութիւնների վրայ։ Վրաստանում ինքնավարութիւն ստացան օսերը, արդէն ինքնավար Աջարիստանը դարձաւ հանրապետութիւն, հանրապետութեան իրաւունք տրուեց մինչեւ իսկ աբխազներին։ Ադրբէջանում, ճիշդ է, որոշ պայքարներից յետոյ, ինքնավարութիւն տրուեց լեռնային Ղարաբաղին։ Հայաստանի քթի տակ կազմուեց Նախկրայի Հանրապետութիւնը, որ փոքրիկ փոփոխութիւններով, ընդգրկում է նախկին երեւանեան նահանգի Շարուր եւ Նախիջեւան գաւառները՝ դերազանցօրէն թաթար ազգաբնակութեամբ։ Եւ ո՞վ զարմանք, անգամ Զանգեզուրի եւ Ջիւանշիրի քսան հազարանոց քրդութիւնը «Քուրդկրայ» անունով առանձին ինքնավար շրջան կազմելու իրաւունք ստացաւ։

Այս բոլոր մանր ժողովուրդների մէջ միայն վիրահայութիւնն է զրկուած մնացել, ազգային փոքրամասնութիւնների համար նախատեսնուած իրաւունքների տեսակէտից, թէեւ նրա խոշոր հատուածները ապրում են Ախալցխա, Ախալքալակ, Բորչալու, Թիֆլիս եւ Գորի գաւառներում այնպիսի հոծ զանգուածներով, որ հեշտութեամբ կարող էին մի կամ երկու ինքնավար շրջան կազմել հայկական ջախջախիչ մեծամասնութեամբ։

Մենք գիտենք, թէ ինչ արժէք է ստանում վրաց բոլշեւիկների աչքում ազգերի ինքնորոշման իրաւունքը, որի համար նրանք երկնքի աստղերն իսկ վար բերելու պատրաստ են, երբ խնդիրը վերաբերում է Ախալքալակ կամ Բորչալու գաւառներում ապրող հայկական զանգուածներին։ Մեզ ծանօթ է նաեւ Անդրկովկասեան Կոմկուսի 1926-ի խորհրդաժողովում Օրջոնիկիձէի արտասանած ճառը, որի մէջ Ժորդանիայի այս մոնթը դատապարտում էր ախալքալակցիներին, որոնք ցանկութիւն էին յայտնել անջատուել Վրաստանից եւ միանալ Հայաստանին — ասելով.

«Գայթակղեցուցիչ է, երբ Խորհրդային Հանրապետութեան քաղաքացիները ուզում են հեռանալ այդ Հանրապետութիւնից (իմա՛ Վրաստանից) լոկ այն պատճառով, որ հայեր են եւ ոչ թէ վրացիներ»։

Սակայն, եթէ մի բոպէ ընդունենք իսկ, թէ ազգային ինքնորոշման պահանջը, որ ճանաչուած է իբրեւ անկապտելի իրաւունք ամէն մի ժողովրդի համար, կարող է նկատուել գայթակղութիւն, երբ ախալքալակաբնակ հայ ժողովրդի կողմից է առաջադրւում՝ մեր առաջ դարձեալ բաց կը մնայ այն հարցը, թէ ինչո՞ւ վերոյիշեալ գաւառների հայ ժողովուրդը պահւում է վրացական վարչութեան տակ։ Ինչո՞ւ իրար կպած այդ գաւառներում չեն կազմուում մի կամ երկու ինքնավար շրջաններ, որպէսզի նրանց մէջ ամփոփուած հայ ժողովուրդը ինքը վարի իր առանձին գործերը։ Թերեւս տեղական ինքնավարութեան այս անմեղ պահանջն էլ է գայթակղութիւն նկատւում Օրջոնիկիձէների կողմից։ Բայց այն ժամանակ ինչո՞ւ են նրանք հանդուրժում աջարացիների, աբխազների եւ օսերի ինքնավարութիւնը։ Հօ նրանք չեն կարող ումեւիցէ հաւատացնել, թէ այս ժողովուրդը, ազգային գիտակցութեան, մշակոյթային առանձնայատկութիւնների եւ վարչական կարողութիւնների տեսակէտից աւելի բարձր մակարդակի վրայ են կանգնած, քան թէ խնդրոյ առարկայ հայ ժողովուրդը։

Զուր է այս հարցերին պատասխան ապասել Վրաստանի ներկայ վարիչներից։ Նրանք անհրաժեշտաբար խուլ պէտք է մնան սրանց հանդէպ, որովհետեւ կոմունիստական կամ Խորհրդային դրօշակի տակ էլ նրանք վրաց